

**Մ.Բ-ն ԸՆԴԴԵՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃՌԻ
ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ՎՃՌԻ**

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<http://www.legalguide.am>>

«Մ.Բ-ն ընդդեմ Լեհաստանի գործով վճռի համառոտ շարադրանքը» կազմվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության նախագահ Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Աշխատանքի մշակմանն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպանատունը:

Աշխատանքը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Մ.Բ-Ն ԸՆԴԴԵՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ՎՃԻՈԸ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Գործը համար հիմք է հանդիսացել 1995 թվականի հուլիսի 19-ին Լեհաստանի քաղաքացի պարոն Մ.Բ-ի (այսուհետ՝ դիմումատու) կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նախկին 25-րդ հոդվածի հիման վրա Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ընդդեմ Լեհաստանի Հանրապետության բերված գանգատը (թիվ 34091/96): Պալատի Նախագահն ընդունեց իր անունը չհրապարակելու մասին դիմումատուի խնդրանքը (Դատարանի Կանոնակարգի 47-րդ կանոնի 3-րդ կետ):

Դիմումատուն մահացել է 1998 թվականի հուլիսի 26-ին: 2001 թվականի մարտի 8-ի որոշմամբ, Դատարանը վճռեց, որ իր արդեն ձևավորված նախադեպի տեսանկյունից չկան խոչընդոտներ, որ գործը շարունակվի դիմումատուի հոր՝ պարոն Հ.Բ-ի կողմից, ով իրավաբանական օգնություն էր ստացել, և ով Դատարանի առջև ներկայացված էր պարոն Բ. Բանասիկի՝ Լոդջում աշխատող փաստաբանի, կողմից: Լեհաստանի կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ներկայացված էր իր գործակալ Պարոն Յ. Վոլայեվիչի միջոցով:

Դիմումատուն, մասնավորապես, պնդում էր, որ ինքը ձերբակալվել էր դատախազի կողմից, ով «դատավոր կամ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված այլ պաշտոնատար անձ» չէր, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով: Բացի դրանից, դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բողոքում էր, որ իր կալանավորմանն առնչվող վարույթների ընթացքում նա երբևէ չի տարվել դատավորի մոտ: Հետևաբար, նա չի ունեցել իր կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկները վիճարկելու որևէ արդյունավետ հնարավորություն:

2001 թվականի մարտի 8-ին Դատարանը գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչեց: 2001 թվականի նոյեմբերի 1-ին Դատարանը փոփոխություն մտցրեց Բաժանմունքի կազմում (Կանոն 25, կետ 1-ն) և գործը փոխանցվեց նոր կազմ ունեցող Չորրորդ Բաժանմունքին (Կանոն 52, կետ 1-ին):

2003 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Դատարանն ընդունելի հռչակեց դիմումատուի գանգատն առ այն, որ դիմումատուն կալանավորման առնչությամբ անհապաղ չի տարվել «դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ» և որ իր կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ վարույթները իրապես մրցակցային չեն եղել: Դատարանը մերժեց գանգատը մնացած մասերով:

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

Ա. Գործի փաստերի նկարագիրը

Դիմումատուն՝ պարոն Մ.Բ-ն Լեհաստանի քաղաքացի է, ծնվել է 1967 թվականին և մահացել 1998 թվականի հուլիսի 26-ին Մարֆանի սինդրոմից (շարակցական հյուսվածքների քայքայում): Դիմումատուն կալանքի տակ էր գտնվում, երբ մահացավ Մարֆանի սինդրոմից: Վարչավայի տարածքային դատարանը կարճեց նրա քրեական գործի վարույթը, որը սկսվել էր 1994 թվականին Բիալիստոկի տարածքային դատախազի կողմից՝ խարդախության մեղադրանքով: 1995 թվականի մարտի 28-ին դիմումատուին մեղադրանք առաջադրվեց մի խումբ անձանց կողմից կատարված խարդախության համար, և 1995 թվականի մարտի 30-ին Բիալիստոկի տարածքային դատախազը նրան կալանավորելու որոշում կայացրեց: Դիմումատուն կասկածվում էր պետական բանկից մի խումբ անձանց հետ խարդախությամբ 380,000 ԱՄՆ դոլար վարկ ստանալու մեջ: Վարկը չէր վերադարձվել: Հետագայում որոշվեց, որ գործում եղած ապացույցները հաստատում են դիմումատուին առաջադրված մեղադրանքը, իսկ նրա վարքագիծը և գործի հանգամանքները վկայում են, որ դիմումատուն ազատության մեջ մնալու դեպքում կխոչընդոտի քրեական վարույթի իրականացմանը:

1995 թվականի հունիսի 13-ին դիմումատուին ներկայացված մեղադրանքները լրացվեցին խարդախության ևս երկու դեպքերով, այն է՝ կեղծ փաստաթղթերով երկու այլ բանկային վարկեր վերցնելը: Դատախազությունը, *inter alia*, հիմնվում էր Լեհաստանից և արտասահմանից ներկայացված բազմաթիվ փաստաթղթերի և այլ ապացույցների վրա: 1995 թվականի հունիսի 28-ին դատախազի կողմից հարցաքննվելու օրը, նրան, իր խնդրանքի համաձայն, գրավոր տրամադրվել են այդ մեղադրանքների հիմքերի շարադրանքը, որոնք տալիս էին իր նկատմամբ առկա կասկածները հիմնավորող փաստացի հանգամանքները:

Դիմումատուն մի քանի անգամ խնդրել է իրեն ազատ արձակել տարբեր հիմքերով, մասնավորապես իր առողջական ծանր վիճակով պայմանավորված: Ազատ արձակվելուն ուղղված դիմումատուի կողմից նախաձեռնած գործողությունները կարելի է համառոտ ներկայացնել հետևյալ կերպ.

- 1995 թվականի ապրիլի 3-ին դիմումատուի փաստաբանը, իսկ 1995 թվականի ապրիլի 6-ին, դիմումատուն անձամբ, բողոքարկել են իր կալանավորման որոշման դեմ, առարկելով, *inter alia*, որ իր վատ առողջությունը անհամատեղելի է իր կալանավորման հետ: Բիալիստոկի տարածքային դատախազը դիմումատուին մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացրեց, այն հիմնավորմամբ, որ հետաննքության ընթացքում ձեռք բերված ապացույցները հաստատում են դիմումատուին առաջադրված մեղադրանքը:
- 1995 թվականի ապրիլի 10-ին Վարչավայի տարածքային դատարանը *բանտախցում* տեղի ունեցած նիստում մերժեց կալանավորման մասին որոշման դեմ դիմումատուի փաստաբանի բերած բողոքը, իսկ 1995 թվականի ապրիլի 27-ին նմանապես մերժվեց նաև դիմումատուի անձամբ բերած բողոքը: 1995 թվականի ապրիլի 28-ին նույն դատարանը թույլ չտվեց դիմումատուին բողոք ներկայացնել 1995 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ, համաձայն որի դատախազությունը մեղադրանք էր առաջադրել դիմումատուին, հիմնավորմամբ, որ գործը բարդ էր, որ կային բազմաթիվ կասկածներ և վիճարկվող հանցագործությունները շատ լուրջ բնույթ ունեին:
- Նա այնուհետև ազատ արձակվելու մասին խնդրանք ներկայացրեց 1995 թվականի ապրիլի 25-ին ինչը, 1995 թվականի ապրիլի 25-ին, մերժվեց Բիալիստոկի տարածքային դատախազի կողմից, իսկ 1995 թվականի մայիսի 18-ին Բիալիստոկի վերաքննիչ դատախազն առանց փոփոխման թողեց այդ որոշումը, գտնելով, որ դիմումատուն գտնվում է բանտային բժշկի բժշկական հսկողության ներքո, որ դիմումատուի կալանավորման հիմքերը դեռ առկա են և որ վիճարկվող հանցագործությունները լուրջ բնույթ ունեն:
- Հաջորդ անգամ ազատ արձակվելու վերաբերյալ խնդրանք դիմումատուն ներկայացրեց 1995 թվականի հուլիսի 13-ին և 1995 թվականի հուլիսի 17-ին նրա խնդրանքը նորից մերժվեց Բիալիստոկի տարածքային դատախազի կողմից: 1995 թվականի հուլիսի 17-ին դիմումատուն խնդրեց իրեն ազատ արձակել մասնագիտացված օֆթալմոլոգիական հետազոտություն անցնելու համար, որ ինքը տառապել է

հիվանդությամբ, որը լուրջ ազդեցություն է ունեցել իր տեսողության վրա, և որ իր տեսողությունը լրջորեն վնասվել է իր կալանավորման արդյունքում:

- 1995 թվականի սեպտեմբերի 12-ին ազատ արձակվելու վերաբերյալ 1995 թվականի սեպտեմբերի 8-ին դիմումատուի ներկայացրած հերթական խնդրանքը մերժվեց Բիալիստոկի տարածքային դատախազի կողմից:
- Նույնաբովանդակ որոշում կայացվեց 1995 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ազատ արձակվելու վերաբերյալ դիմումատուի ներկայացրած հերթական խնդրանքի կապակցությամբ. դատախազությունը գտավ, որ վարույթների ընթացքում արդեն ձեռք բերված ապացույցները հաստատում են դիմումատուին առաջադրված մեղադրանքները և առկա են իրական հիմքեր ենթադրելու, որ ազատ արձակվելու դեպքում նա ճնշում կգործադրի վկաների նկատմամբ:
- 1995 թվականի նոյեմբերի 21-ին Բիալիստոկի տարածքային դատախազը նորից մերժեց ազատ արձակել դիմումատուին: Նույն օրը դիմումատուն Բիալիստոկի վերաքննիչ դատախազին խնդրեց վերացնել այդ որոշումը:
- 1996 թվականի հունվարի 8-ին Դիմումատուն խնդրեց իրեն ազատ արձակել և 1996 թվականի հունվարի 10-ին առաջարկեց որպես գրավ մուծել 5000 PLN [լեհական դրամի միավոր]: 1996 թվականի հունվարի 25-ին Վարչավայի տարածքային դատարանը մերժեց գրավով ազատվելու մասին դիմումատուի խնդրանքը: Գրավով ազատվելու մասին Դիմումատուի խնդրանքը մերժելու մասին 1996 թվականի հունվարի 25-ի որոշումը 1996 թվականի փետրվարի 13-ին անփոփոխ թողեց Վարչավայի վերաքննիչ դատարանը, որոշելով, որ դիմումատուի բողոքում բացակայում են բողոքարկվող որոշման օրինականությունը կասկածի տակ դնող հիմնավորումները:

Դիմումատուի կալանքի ժամկետը նաև մի քանի անգամ երկարացվել է: Նա բողոքարկել է իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումները, ինչը որևէ արդյունք չի տվել: Դիմումատուի կալանքի ժամկետի երկարացման խրոնոլոգիան կարելի է համառոտ ներկայացնել հետևյալ կերպ.

- 1995 թվականի հունիսի 26-ին Վարչավայի տարածքային դատարանը որոշում կայացրեց դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երեք ամսով, մինչև 1995 թվականի սեպտեմբերի 29-ը, երկարացնելու մասին:
- 1995 թվականի հուլիսի 27-ին Վարչավայի վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց իր կալանքի

ժամկետը ևս երեք ամսով երկարացնելու մասին Վարչավայի տարածքային դատարանի 1995 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ դիմումատուի բերած բողոքը:

- 1995 թվականի օգոստոսի 11-ին Բիալիստոկի վերաքննիչ դատախազն անփոփոխ թողեց 1995 թվականի հուլիսի 17-ի որոշումը, եզրակացնելով, դիմումատուի մեղքը հաստատող ապացույցները ուժեղացնում են նրան առաջադրված մեղադրանքը:
- Ձեռք բերված ապացույցները լրացնելու համար միջոցներ ձեռք առնելու նպատակով, 1995 թվականի սեպտեմբերի 18-ին դիմումատուի կալանքի ժամկետը երկարացվեց մինչև 1995 թվականի նոյեմբերի 29-ը: 1995 թվականի հոկտեմբերի 26-ին Վարչավայի վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց այդ որոշման դեմ դիմումատուի բերած բողոքը:
- 1995 թվականի նոյեմբերի 23-ին Վարչավայի վերաքննիչ դատարանը երկարացրեց դիմումատուի կալանքի ժամկետը մինչև 1995 թվականի դեկտեմբերի 29-ը: Նույն օրը դատարանի քարտուղարությունը ստացավ դիմումատուի նամակը, որում նա խնդրում էր դատարանից թույլ տալ իրեն մասնակցելու իր կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ կայանալիք դատական նիստին:
- 1995 թվականի նոյեմբերի 26-ին Վարչավային վերաքննիչ դատարանը անփոփոխ թողեց դիմումատուի կալանքի ժամկետի երկարացնելու մասին Վարչավայի տարածքային դատարանի 1995 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը:
- 1995 դեկտեմբերի 14-ին Վարչավայի վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց դիմումատուի կանալքի ժամկետը մինչև 1995 թվականի դեկտեմբերի 29-ը երկարացնելու մասին 1995 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմումատուի բերած բողոքը:
- 1995 թվականի դեկտեմբերի 15-ին Բիալիստոկի վերաքննիչ դատախազն առանց բավարարման թողեց իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին 1995 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմումատուի բերած բողոքը:

Դիմումատուն հնարավորություններ է ունեցել ծանոթանալու գործի նյութերին և մասնավորապես 1995 թվականի նոյեմբերի 16-ին, 17-ին, 20-ին և 21-ին ստացել է դրանք: 1995 թվականի դեկտեմբերի 8-ին, 12-ին և 15-ին ուսումնասիրել է գործի նյութերը: 1995 թվականի դեկտեմբերի 21-ին դատախազը որոշում կայացրեց

դիմումատուին տրամադրել դեկտեմբերի 15-ին նրա խնդրած փաստաթղթերը, որոնք գործի նյութերից հանվել և տեղափոխվել էին այլ գործի նյութեր: 1996 թվականի հունվարի 19-ին դատարանին ուղղված իր նամակում դիմումատուն խնդրեց թույլ տալ ևս մեկ անգամ ուսումնասիրելու գործի նյութերը: 1996 թվականի փետրվարի 21-ի դիմումատուի խնդրանքի համաձայն, 1996 թվականի փետրվարի 28-ին գործի նյութերը դատախազության կողմից ուղարկվեցին Բիալիստոկի կալանավայր և դիմումատուն դրանց նորից ծանոթացավ 1996 թվականի մարտի 1-ին:

1995 դեկտեմբերի 21-ին Բիալիստոկի տարածքային դատախազը ավարտեց հետաքննությունը, որոշելով, որ գործի նյութերը պարունակում են բավարար ապացույցներ մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելու համար:

1996 թվականի մարտի 7-ին Վարշավայի տարածքային դատարանը նիստ գումարեց քննելու գրավով ազատվելու մասին դիմումատուի խնդրանքը և մուծման ենթակա գրավի գումարի չափը: Դիմումատուի փաստաբանը մասնակցեց այդ նիստին: Դատարանը գրավի չափը սահմանեց 15000 PLN: Դիմումատուն ազատ արձակվեց գրավի մուծման օրը: 1998 թվականի հուլիսի 26-ին դիմումատուն մահացավ Մարֆանի սինդրոմից: 1998 թվականի օգոստոսի 20-ին Վարշավայի տարածքային դատարանը կարճեց նրա քրեական գործի վարույթը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Խափանման միջոցները քրեական վարույթում

Գործի հանգամանքների տեղի ունենալու ժամանակ կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինները նախատեսված էին Լեհաստանի 1969 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ և 212-րդ հոդվածներով, որոնք սահմանում էին հետևյալը.

Հոդված 210

«1. Խափանման միջոցները (օրինակ կալանքը, գրավը և ոստիկանական վերահսկողությունը) կիրառում է դատարանը. նախքան մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելը դրանք կիրառում է դատախազը (...):»

Հոդված 212

«1. Խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել [վերաքննիչ դատարան] ...»

2. Որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին դատախազի որոշումը կարող է բողոքարկվել տվյալ գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող դատարան ...»

Այս դրույթները լրացվել են 1995 թվականի հունիսի 29-ին Քրեական դատավարության օրենսգրքում և այլ Քրեական կարգերում փոփոխություններ կատարելու մասին 1995 թվականի հունիսի 29-ի օրենքով, որն ուժի մեջ մտավ 1996 թվականի օգոստոսի 4-ին: Այդ փոփոխությունների համաձայն կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն դատարանի կողմից:

Քրեական դատավարության նոր օրենսգիրքն ընդունվել է Սեյմի (պառլամենտի) կողմից 1997 թվականի հունիսի 6-ին: Դրա 250-րդ հոդվածի համապատասխան մասն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է դատարանի որոշմամբ:

2. Կարույթի հետաքննության փուլում, կալանքը որպես խափանման միջոց, դատախազի միջնորդությամբ կիրառվում է տարածքային դատարանի կողմից, որի իրավասության ներքո է իրականացվում հետաքննությունը: Մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելուց հետո, կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող դատարանի կողմից:

3. 2-րդ մասով նախատեսված միջնորդությունը դատարան ներկայացնելու հետ միասին, դատախազը նաև պետք է կասկածյալին դատարան բերելու մասին որոշում կայացնի:»

Սույն գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ դատական լսում չհանդիսացող դատական այլ նիստերին կողմերի մասնակցության հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին 1969 թվականի Քրեական դատավարության օրենսգրքի 87-րդ և 88-րդ հոդվածներով, որոնց համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

Հոդված 87

«Դատարանն իր որոշումը հրապարակում է դատական նիստի ժամանակ եթե դա նախատեսված է օրենքով, հակառակ դեպքում բանտախցում տեղի ունեցած դատական նիստի ժամանակ...»

Հոդված 88

«Բանտախցում անցկացվող դատական նիստին կարող է ներկա լինել դատախազը (...). այլ կողմերը կարող են մասնակցել օրենքով նախատեսված դեպքերում:»

Նոր քրեական դատարավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի համաձայն, նախքան խափանման միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը, դատարանը պետք է լսի հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձին: Եթե Կալանավորված անձը փաստաբան ունի, ապա նա պետք է իրավունք ունենա մասնակցելու դատական նիստին: Պարտադիր չէ փաստաբանին տեղյակ պահել դատական նիստի օրվա և ժամի մասին, եթե այդ մասին չի խնդրում կասկածյալը և եթե դա չի ձգձգի վարույթը:

Դատարանը պետք է կալանավորված անձի փաստաբանին տեղյակ պահի դատական նիստի տեղի և ժամի մասին, որի ընթացքում որոշում է կայացվելու կալանքի ժամկետի երկարացման կամ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետի երկարացման դեմ բերված բողոքների վերաբերյալ:

Բ. Դատախազի կարգավիճակը Լեհաստանի օրենսդրության համաձայն

Գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի պետական մարմինների փոխհարաբերությունները սահմանված էին ժամանակավոր օրենսդրությամբ, մասնավորապես 1992 թվականի հոկտեմբերի 17-ի Սահմանադրական ակտով (Mała Konstytucja): Ակտի 1-ին հոդվածը իշխանությունների տարանջատման սկզբունքը սահմանում էր հետևյալ կերպ.

«Պետությունում օրենսդիր իշխանությունն իրակայացնում են Լեհաստանի Հանրապետության Սեյմը և Սենատը, գործադիր իշխանությունն իրականացնում է Լեհաստանի Հանրապետության նախագահը և նախարարների խորհուրդը, իսկ դատական իշխանությունն իրականացնում են անկախ դատարանները»:

Ակտի 56-րդ հոդվածի համաձայն Նախարարների Խորհուրդը (Rada Ministrów) կազմված է Վարչապետից, փոխվարչապետից և նախարարներից:

1985 թվականի հունիսի 20-ի ակտի (Ustawa o sądach powszechnych) համաձայն Լեհաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են դատարանները: Դատարաններն են՝ վերաքննիչ դատարանը, տարածքային և շրջանային դատարանները: Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն Գերագույն դատարանը ցածր ատյանի դատարանների նկատմամբ ունի վերահսկողական իրավասություն: Դատախազական մարմինների մասին 1995 թվականի հունիսի 20-ի ակտի, որը սահմանում է դատախազական մարմինների կառուցվածքի, գործունեության և կազմակերպման հիմնական սկզբունքները, 1-ին հոդվածը սահմանում է հետևյալը.

«1. Դատախազական մարմիններն են՝ Գլխավոր դատախազը, դատախազները և զինվորական դատախազները: Դատախազները և զինվորական դատախազները ենթարկվում են Գլխավոր դատախազին:
2. Գլխավոր դատախազը դատախազական բարձրագույն մարմինն է, նրա գործառույթներն իրականացնում է Արդարադատության նախարարը:»

Ակտի 2-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«Դատախազական մարմինը պետք է ապահովի օրինականության ամրապնդումն ու հանցագործությունների քննությունը»:

Ակտի 7-րդ հոդվածի համաձայն օրենքով սահմանված իր պարտականություններն իրականացնելիս, դատախազը պետք է առաջնորդվի օբյեկտիվության և օրենքի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքներով:

Ակտի 8-րդ հոդվածի համաձայն դատախազն անկախ է այս հոդվածով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս: Դատախազը պետք է առաջնորդվի իր վերադասների ցուցումներով, կարգադրություններով և հրամաններով:

Գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ գործող 1969 թվականի Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ բաժինը, որն ուներ հետևյալ վերնագիրը. «Վարույթի կողմերը, պաշտպանը, տուժողների ու հասարակության ներկայացուցիչները», դատախազին նախատեսում էր որպես քրեական վարույթի կողմ: Օրենսգրքի համապատասխան հոդվածներից բխում էր, որ դատախազը քրեական վարույթի ընթացքում իրականացնում էր հետաքննչական և դատախազական գործառույթներ: Մասնավորապես, հետաքննության ավարտից հետո, նա մեղադրական եզրակացությունը ներկայացնում էր տվյալ գործը քննելու իրավասություն ունեցող դատարան և ներկայացնում մեղադրող կողմը:

1969 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն «քրեական վարույթ իրականացնող մարմինները [ներառյալ դատախազը] պետք է ուսումնասիրեն և հաշվի առնեն ինչպես մեղադրյալի օգտին այնպես էլ դեմ խոսող ապացույցները»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

1. Դիմումատուն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա բողոքում էր, որ ինքն ազատությունից զրկվել էր դատախազի այլ ոչ թե «դատավորի կամ դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձի» որոշմամբ, ինչպես որ պահանջվում է Կոնվենցիայի հիշյալ հոդվածը: Գործի հանգամանքների տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի գործող օրենսդրության համաձայն դատախազը նաև իրականացնում էր գործի հետաքննությունը և դրանից հետո դատական վարույթներում պաշտպանում մեղադրանքը: Դիմումատուն պնդում էր, որ դատախազը գործադիր իշխանության ներկայացուցիչ էր:

5-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է.

«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

2. Կառավարությունը բողոքի վերաբերյալ գրավոր բացատրություններ չներկայացրեց:

3. Դիմումատուն նորից նշեց, որ դատախազը, ինչպես որ նրա կարգավիճակը սահմանված էր գործի իրադարձությունների տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի գործող օրենսդրությամբ, չէր կարող համարվել դատական իշխանություն իրականացնող մարմին, և հետևաբար չէր կարող օժտված լինել կալանավորման մասին որոշում կայացնելու իրավասությամբ:

4. Դատարանը հիշատակեց, որ Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի (*Niedbala v. Poland* (թիվ 27915/95, 48-57 մասեր, 4 հուլիսի 2000թ.) գործով իր վճռում, արդեն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի գործող օրենսդրության համաձայն Դատախազը կարող էր համարվել «անկախությամբ» և «անաչառությամբ» օտված «դատական իշխանություն իրականացնող» պաշտոնատար անձ, ինչպես պահանջում է 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանն այս գործով 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում արձանագրեց, առ այն, որ Դատախազը չի բավարարում այդ պարտադիր երաշխիքներին:

5. Դատարանը գտավ, որ այս գործը նման է Նիեբալդայի (*Niedbala*) գործին: Դատարանը արձանագրեց, որ սույն գործով այլ եզրահանգման գալու համար հիմքեր չկան: Հետևաբար Դատարանը եզրակացրեց, որ «դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված այլ պաշտոնատար անձի մոտ բերվելու» դիմումատուի իրավունքը չի հարգվել:

6. Հետևաբար, առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

7. Դիմումատուն 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա նաև բողոքում էր, որ իր կալանքին վերաբերվող վարույթի ընթացքում, ինքը երբևէ չի տարվել դատավորի մոտ: Հետևաբար, ինքը հնարավորություն չի ունեցել արդյունավետորեն վիճարկելու դատախազության կողմից բերված իր կալանավորումը հիմնավորող որևէ փաստարկ:

5-րդ հոդվածի 4-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

8. Գանգատի այս մասի էության վերաբերյալ Կառավարությունն ընդունեց, որ կալանավորման ժամկետի երկարացման ընթացքում դիմումատուն չի մասնակցել Վարչավայի տարածքային և վերաքննիչ դատարաններում իր կալանավորման օրինականության հարցի քննման վարույթներին: Դրա պատճառն այն է, որ այդ ժամանակ գործող քրեական դատավարության օրենսգիրքը թույլ չէր տալիս կալանքի տակ գտնվող անձին կամ նրա փաստաբանին մասնակցել իր կալանավորման օրինականության որոշման վերաբերյալ դատական նիստին:

9. Դիմումատուն պնդում էր, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներն իր կալանավորման առնչությամբ իրականացված վարույթների ժամանակ չեն պահպանվել: Ո՛չ դիմումատուն և ո՛չ իր փաստաբանը իրավունք չեն ունեցել

մասնակցելու դատական վարույթներին կամ ծանոթանալ դիմումատուի կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկներին:

10. Դատարանը հիշատակեց, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կալանավորված անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իր կալանավորման նյութական ու ընթացակարգային պայմանները, որոնք 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով էական են իր կալանավորման «օրինականության» որոշման համար (տե՛ս Բրոգանը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and Others v. the United Kingdom) գործով 1988 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, Շարք Ա, թիվ 154-B, էջ 34, կետ 65): Չնայած միշտ չէ որ պարտադիր է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի տակ ընկնող վարույթները համապատասխանեն նույն երաշխիքներին, որոնք 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում են քաղաքացիական կամ քրեական դատաքնությունների համար (տե՛ս Դե Ուիլդը, Ումսն ու Վերսիպը ընդդեմ Բելգիայի գործով (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) 1971 թ. հունիսի 18-ի վճիռը, էջ. 42, մաս 78 ...), այդ վարույթները պետք է ունենան դատական բնույթ և ապահովեն վիճարկվող ազատության սահմանափակման տեսակին համապատասխան երաշխիքներ: Կարևոր է, որ անձի համար ում ազատությունը սահմանափակվում է, հասանելի լինի դատարանը և նա պաշտպանի իրեն անձամբ կամ, եթե անհրաժեշտ է ներկայացուցչության որևէ ձևի օգտագործմամբ ինչի բացակայությունը նշանակում է, որ նա չունի «ազատությունից զրկելու վարույթների համար սահմանված հիմնարար երաշխիքները» (տե՛ս Դե Ուայլդը, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի գործով վճիռը, էջ 41, մաս 76, Վինտերվերն ընդդեմ Նիդեռլանդների (Winterwerp v. The Netherlands) գործով 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը Շարք A թիվ 33, էջ 24, մաս 60, տե՛ս Սանչես-Ռեյսսեն ընդդեմ Շվեյցարիայի (Sanchez-Reisse v. Switzerland) գործով 1986 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, Շարք A թիվ 107, էջ 20, կետ 51):

11. Սույն գործով կալանքի ժամկետի երկարացման մասին որոշումն այդ ժամանակ կայացնում էր Դատախազը: Դատարան բողոք էր ներկայացվել կալանավորման որոշման դեմ: Օրենքով ո՛չ դիմումատուին անձամբ ո՛չ էլ իր փաստաբանը իրավունք չունեին մասնակցել այդ բողոքի հիման վրա իրականացվող վարույթին:

Ավելին, օրենքը դիմումատուին կամ նրա փաստաբանին թույլ չէր տալիս մասնակցել իր կալանավորման օինականության քննարկմանը առնչվող ցանկացած այլ վարույթներին, ներառյալ այն

վարույթներին, որոնց ընթացքում վիճարկվում էր կալանքի օրինականության հարցը, ներառյալ կալանքի ժամկետի երկարացման հարցի վերաբերյալ որոշման կայացումը:

Նշված իրավական նորմերի դրույթներով նույնիսկ չէր պահանջվում դիմումատուի կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկները հայտնել դիմումատուին կամ նրա փաստաբանին: Հետևաբար, դատախազությունը ազատ էր մասնակցել համապատասխան դատական նիստերին և կասկածյալի բացակայությամբ ներկայացնել նրան կալանքի տակ պահելու ժամկետի երկարարացումը հիմնավորող լրացուցիչ փաստարկներ, մինչդեռ ոչ դիմումատուն ոչ էլ նրա փաստաբանը չունեին որևէ հնարավորություն ծանոթանալ այդ փաստարկներին, կամ առարկություններ կամ մեկնաբանություններ ներկայացնել դրանց վերաբերյալ: Դատարանի կարծիքով, դիմումատուի վատթարացող առողջական վիճակը, որն ի վերջո հանգեցրեց նրա մահվանը, հանգամանք էր, որը պետք է նպաստեր [դատական նիստերին] դիմումատուի ներկա գտնվելուն:

Մեծ հավանականություն կար, որ դիմումատուի ներկայությունը իշխանություններին կհամոզեր, որ նա պետք է ազատ արձակվի: Վերը թվարկված նկատառումների լուսի ներքո, Դատարանը որոշեց, որ Դիմումատուն չի ունեցել մրցակցային սկզբունքի հիման վրա իրականացած վարույթների հնարավորություն:

Դատարանը գտավ, որ դիմումատուի կալանքի օրինականության վիճարկման վարույթները լիովին չեն բավարարել 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված երաշխիքներին:

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

12. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.
«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

13. Որպես բարոյական վնասի հատուցում դիմումատուն պահանջում էր 100,000 եվրո:

14. Կառավարությունը գտնում էր, որ պահանջվող գումարը չափազանց մեծ էր: Կառավարությունը Ղատարանից խնդրեց վճռել, որ խախտման առկայության մասին որոշումն ինքնին կհանդիսանա բավարար արդարացի փոխհատուցում: Որպես այլընտրանք, Կառավարությունը առաջարկեց դատարանին արդարացի փոխհատուցման չափը սահմանել՝ ելնելով նմանատիպ գործերով իր վճիռներից, ներպետական տնտեսական դրությունից, մասնավորապես ազգային դրամի փոխարժեքից և Լեհաստանում նվազագույն աշխատավարձի չափից:

15. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտման արդյունքում պատճառված ենթադրյալ վնասի վերաբերյալ ներկայացված պահանջին, Ղատարանը հիշատակում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտմաներին վերաբերող վերջին գործերով փոքր չափի փոխհատուցում է տրամադրել (տե՛ս Սանչես-Ռեյսսեն ընդդեմ Շվեյցարիայի (*Sanchez-Reisse v. Switzerland*) գործով վերը բերված վճիռը, կետ 63, Վան Դրուգենբրոեքն ընդդեմ Բելգիայի (*Van Droogenbroeck v. Belgium*) գործով 1983 թվականի ապրիլի 25-ի վճիռը (50-րդ հոդված), Շարք Ա թիվ 63, էջ 7, կետ 13, և Դե Յոնգը, Բայլետը և Վան դեն Բրինկն ընդդեմ Նիդերլանդների (*De Jong, Baljet and Van den Brink v. the Netherlands*) գործով 1984 թվականի մայիսի 22-ի վճիռը, Շարք Ա, թիվ 77, էջ 29, կետ 65, Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի (*Niedbała v. Poland*) գործով վերը բերված վճիռը, 88-89-րդ կետեր): Մի շարք այլ գործերով Ղատարանը մերժեց որևէ փոխհատուցում տրամադրել (տե՛ս Պաուելսն ընդդեմ Բելգիայի (*Pauwels v. Belgium*) գործով 1988 թվականի մայիսի 28-ի վճիռը, էջ 20, մաս 46, Բրոգանը և Մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Brogan and Others v. the United Kingdom*) գործով 1988 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, Շարք Ա, թիվ 154-B, (50-րդ հոդված), 44-45-րդ էջեր, կետ 9, Հյուբերն ընդդեմ Շվեյցարիայի (*Huber v. Switzerland*) գործով 1990 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, Շարք Ա, թիվ 188, էջ 19, կետ 46, Թոթն ընդդեմ Ավստրիայի (*Toth v. Austria*) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, Շարք Ա, թիվ 224, էջ 24, կետ 91, Կամպանիսն ընդդեմ Հունաստանի (*Kampanis v. Greece*) գործով 1995 թվականի հուլիսի 13-ի վճիռը, Շարք Ա, թիվ 318-B, էջ 49, կետ 66, Հուդն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Hood v. the United Kingdom*) գործով 1999 թվականի փետրվարի 18-ի վճիռը, հրապարակված Ղատարանի պաշտոնական գեկույցներ, 84-87-րդ կետեր և Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (*Nikolova v. Bulgaria*) գործով 1999 թվականի մարտի 25-ի վճիռը, կետ 76, ՄԻԵԿ 1999-II).

16. Սույն գործով դատարանը գտավ, որ դիմումատուն ոչ նյութական վնաս է կրել այն բանի արդյունքում, որ իր կալանավորմանը վերաբերով վարույթների ընթացքում ինքը երբեք չի բերվել դատավորի մոտ: Հետևաբար, նա իր կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկներին արդյունավետորեն առարկելու որևէ հնարավորություն չի ունեցել: Հաշվի առնելով գործի հանգամանքները և գնահատելով այն արդարացիության սկզբունքի հիման վրա Դատարանը, որպես ոչ-նյութական վնասի հատուցում 2,500 եվրո է շնորհում:

Բ. Ծախսեր և ծախքեր

17. Դիմումատուի հայրը, ով Դատարանի առջև իր իրավաբանական ներկայացվածության հետ կապված իրավաբանական օգնություն էր ստացել Եվրոպայի խորհրդից, չպահանջեց գործի նախապատրաստման ընթացքում իր կատարած ծախսերի և ծախքերի հետագա փոխհատուցում:

Գ. Չվճարելու դեպքում գանձվող տոկոսները

18. Դատարանը սահմանում է, որ չվճարելու դեպքում տոկոսները պետք է հաշվարկվեն Եվրոպական կենտրոնական բանկի միկրովարկերի տոկոսադրույքների համապատասխան, այն է՝ երեք տոկոս:

Այս հիմքերով, Դատարանը միաձայն.

1. *Վճրեց*, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

2. *Վճրեց*, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

3. *Վճրեց, որ*

(a) Պատասխանող պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, սույն վճռի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի 2,500 (երկու հազար հինգ հարյուր) եվրոյին համարժեք Լեհական զլոտի պայմանագրի կնքման պահին առկա փոխարժեքով, որպես բարոյական վնասի հատուցում, գումարած այդ գումարի հետ կապված վճարման ենթակա բոլոր հարկերը.

(b) Նշված երեք ամիսները լրանալուց հետո սահմանված գումարների տոկոսները պետք է գանձվեն Եվրոպական կենտրոնական բանկի միկրովարկերի տոկոսադրույքների

համապատասխան՝ չվճարելու ժամկետի համար և հավելյալ երեք տոկոս:

4. Դատարանը մերժեց դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կազմված է անգլերենով և հրապարակված գրավոր 2004 թվականի ապրիլին, Դատարանի Կանոնների 77-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն:

Մայքլ Օ' Բոյլ
Քարտուղար

Նիկոլաս Բրաունգա
Նախագահ